ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 ապրիլի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

57
(3088)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

3.7 ՄԼՆ ԴՐԱՄՆ «ԱՆՀԵՏԱՑԱՎ» ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐՔԻՑ

Խաղող մթերողների բունտը կանխելու, փողոցները փակելու աղմուկից խուսափելու համար ՀՀ Կառավարությունը կոնյակի սպիրտ է գնել կոնկրետ գործարանից՝ պարտադրելով նրան քաղաքացիներից խաղող մթերել: Բայց երբ գնված կոնյակի սպիրտը Կառավարությունը վաճառել է, 3.7 մլն դրամ տուժել է:

Հիմա ամեն ինչի մասին՝ հերթով: ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնապես տեղեկացավ, որ 2023 թվականին խաղողի մթերումների գործընթացը կազմակերպելու եւ լրացուցիչ ծավալով խաղողի մթերումներ իրականացնելու նպատակով ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից ձեռք է բերվել շուրջ 693.0 հազար լիտր (100%-անոց սպիրտի հաշվարկով) կոնյակի սպիրտ՝ պայմանով, որ օտարող կազմակերպությունը պետք է իրականացնի համարժեք ծավալով խաղողի մթերումներ:

Ջարմանալի զուգադիպությամբ ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ին N1520-L որոշմամբ՝ «խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները հաստատելու մասին» ծրագրից Արարատի եւ Արմավիրի մարզերի խաղող մթերողներից օգտվել է միայն «ՄԱՊ» ընկերությունը: Այս ընկերության սեփականատերը, հիշեցնենք, որ Ազգային ժողովի նախկին պատգամավոր («Օրինաց երկիր» կուսակցությունից, հետո՝ ՀՀԿ-ական դարձած) Ալեքսանդր Պետրոսյանն է, տնօրենը՝ վերջինիս որդին՝ Մակար Պետրոսյանը:

Էկոնոմիկայի նախարարության կողմից մեզ տրված պատասխանում նշված է, որ «2023 թվականի սեպտեմբեր եւ նոյեմբեր ամիսներին «ՄԱՊ» ՓԲԸ-ից ձեռք է բերվել 1 մլրդ 442 մլն 807 հազար դրամ արժողությամբ 692 հազար լիտր 100% սպիրտի հաշվարկով հայկական կոնյակի սպիրտ, իսկ «ՄԱՊ» ՓԲԸ-ն ցանկում ներառված խաղողագործներից մթերել է շուրջ 7620 տոննա խաղող»: Գործադիրի որոշմամբ Կառավարության անունից, հանդես է եկել ադամանդագործությունը խթանելու համար ստեղծված «Հայ-Ալմաստ» ՓԲԸ՝ գնելով եւ հետագայում նաեւ վաճառելով կոնյակի սպիրտ:

Գործարքը, որն իր տրամաբանությամբ պիտի սոցիալ-տնտեսական կայունություն բերեր 2 մարզերում, վերածվեց տնտեսական անարդյունավետության դասական օրինակներից մեկի: Կառավարության գնած սպիրտը հետագայում վերավաճառվել է, որի արդյունքում պետությունը ոչ միայն շահույթ չի ստացել, այլեւ գրանցել է ֆինանսական կորուստ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:
«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի 6.05.2025-ին

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ռուբեն Վարդազարյանի վերսկսած գործով միջնորդություն է ներկայացվելու դատարան, որպեսզի դատարան հրավիրվեն եւ հարցաքննվեն ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը, նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը: Նախկինում դատավոր Վահե Դոլմազյանը մերժել էր նրանց հարցաքննելու միջնորդությունը՝ պատճառաբանելով, թե նրանք մեղադրանքի հետ կապ չունեն, սակայն հիմա իրավիճակ է փոխվել: Բանն այն է, որ մինչ այդ դատարանը նպատակահարմար չգտավ հարցաքննելու նախկին դատավոր, ներկայումս ԱԱԾ փոխտնօրեն Անդրանիկ Սիմոնյանին, սակայն գործը վերսկսելու որոշումից հետո նա հրավիրվեց դատարան եւ հարցաքննվեց: Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդազարյանը մեղադրվում է արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար: Վարդազարյանը, ըստ մեղադրանքի, 2019 թվականի հուլիսի 19-ից զբաղեցնելով ԲԴԽ նախագահի պաշտոնը, հանդիսանալով դատական իշխանության մարմնի ղեկավար աշխատող, միջամտել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անդրանիկ Սիմոնյանի կողմից արդարադատության իրականացմանը: ԲԴԽ նախկին նախագահը չի ընդունում առաջադրված մեղադրանքը:



Այսօր Ազգային ժողովում մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը ներկայացնելու է մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաղորդում: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով զեկույցը, պարզեց, որ «Հայր եւ Որդի Երեմյաններ» ընկերության «պատճառով» տուգանվել է «Ծովածոց» ՍՊ ընկերությունը: Հանձնաժողովը բացահայտել է, որ «Ծովածոց» ՍՊ ընկերությունն օգտագործել է «Lavash» բառը պարունակող «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc», «Lavash Hotels Llc» ֆիրմային անվանումներ այն դեպքում, երբ նման ֆիրմային անվանումներ օգտագործելու իրավունքի առկայության հավաստման տեսանկյունից առկա չէ այդ իրավունքը հավաստող «Ծովածոց» ՍՊ ընկերության անվամբ գրանցված համալիր թույլտվության պայմանագիր: Փոխարենը «Հայր եւ Որդի Երեմյաններ» ընկերության անվամբ 2023 թվականի դեկտեմբերի 6-ին ազգային ընթացակարգով գրանցվել եւ ՀՀ-ում իրավական պահպանություն է ստացել «LAVASH RESTAURANT» անվանումով ապրանքային նշանը, իսկ 2024 թվականի փետրվարի 19-ին «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանը 2021 թվականի հունվարի 1-ից սկսած ճանաչվել է հանրահայտ, ուստի «Ծովածոց» ՍՊ ընկերությունը չի կարող օգտագործել «Lavash» բառը պարունակող «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc» եւ «Lavash Hotels Llc» ֆիրմային անվանումները կամ արտահայտությունները: Հանձնաժողովը հարուցված վարույթի արդյունքում արձանագրել է, որ «Ծովածոց» եւ «Հայր եւ Որդի Երեմյաններ» ընկերությունները գործունեություն են ծավալում նույն ոլորտում եւ երկու ընկերությունների կողմից օգտագործվող համապատասխանաբար «Lavash Hotels LLC», «Lavash Hotels llc», «Lavash Hotels Llc» արտահայտություններում եւ «LAVASH RESTAURANT» հանրահայտ ապրանքային նշանում տարբերակող բառը «Lavash»-ն է, իսկ «Հայր եւ Որդի Երեմյաններ» ընկերության անվամբ գրանցված «LAVASH RESTAURANT» անվանումով ապրանքային նշանը հանրահայտ է եւ «Ծովածոց» ՍՊ ընկերության կողմից «Lavash» բառը պարունակող նման արտահայտությունների օգտագործումը կարող է սպառողին շփոթության մեջ գցել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2025 թվականի հունվարի 15-ից Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության պետի պաշտոնը թափուր է: Գրեթե 4 ամիս է, ինչ խնդրահարույց վարչությունը չունի պետ: Ավելին՝ մինչ իրավաբանական ոլորտը քննարկում եւ վերլուծում է ՍԴ որոշումը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման օրենքի վերաբերյալ, գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը լռում է, թե ում է ցանկանում ներկայացված թեկնածուներից տեսնել պետի պաշտոնում: Ինչն է կամ ով է խանգարում գլխավոր դատախազին որոշում կայացնել՝ դժվար է ասել, սակայն փաստ է մեկ բան. 4 ամիս վարչությունը գործում է առանց պետի: Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի եւ վարչության պետի տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու բաց մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց անունները հայտնի են՝ Կորյուն Վարդանի Սերոբյան եւ Հռիփսիմե Խաչիկի Ասատրյան:

ԻՆՉ ԿԲԵՐԻ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄԸ

«ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ ԲԱՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է». ԱՐԱՅԱՆ

Ինչպես հայտնի է, ապրիլի 12-ին «Լույսի բանակ» ռազմահայրենասիրական կազմակերպությունը նախագահ Կարեն Արայանի գլխավորությամբ սկսել է նոր շարժում, որ կոչվում է «Վերածնունդ»: Ի՞նչ արդյունք ունեն գրանցած, ի՞նչ ակնկալիքով են նոր հանրահավաք կազմակերպում մայիսի 1-ին, ինչպե՞ս հասնել իշխանափոխության, ինչո՞ւ է այսօր Հայոց ցեղասպանության ժխտողականության քաղաքականություն վարվում: Այս եւ այլ հարցերի շուրջ ArmLur.am լրատվականը զրուցել է «Լույսի բանակ» ռազմահայրենասիրական միավորման նախագահ Կարեն Արայանի հետ:

-Պարոն Արայան, օրերս ստացաք Արեւմտյան Հայաստանի պատվավոր քաղաքացու անձնագիր, ի՞նչ պարտավորությամբ եք այն կրելու:

-Իրականում, շատ պարտավորեցնող է. իմ ողջ գործունեության հիմնական նպատակներից է տարածքային ամբողջականությունը: Ստանալով Արեւմտյան Հայաստանի պատվավոր քաղաքացու անձնագիր՝ հասկանում ես, որ շատ պարտավորեցնող է:

-Դուք շարժում եք սկսել. երկու անգամ արդեն հանրահավաք եք իրականացրել, ու Ձեր գաղափարներից է այն, որ բոլոր պատմական հողերը պետք է վերականգնել եւ իրականացնել իշխանափոխություն: Կերկայացնե՞ք Ձեր գրանցած արդյունքները: Մայիսի 1-ին կրկին հանդես եք գալու հանրահավաքով, ի՞նչ սպասումներ եւ ի՞նչ ակնկալիքներ ունեք:

-Իմ նպատակը միայն տարածքային վերականգնումը չէ. մենք այսօր ոչ միայն տարածքներ ենք կորցրել, այլեւ կորցրել ենք ազգային արժեքների պահպանման ձգտումը, կորցրել ենք մեր դիրքն ու երեսը աշխարհում: Կորցրել ենք միմյանց հանդեպ մեր հարգանքը: Իշխանափոխությունը պետք է այդ ամենը վերականգնելու համար, որովհետեւ ամեն ինչ գալիս է իշխանությունից, նույնիսկ մարդկանց՝ թե՛ հագուստի, թե՛ լսած երաժշտության ճաշակը, որովհետեւ իշխանությունն է առաջ բերում մշակույթի ներկայացուցիչներին, նրանց մեծ մասին ընդունում են հենց իշխանության միջոցով: Այսօրվա իշխանություններն ազգային բառից, չգիտեք, թե ինչ են լինում: Վախենում են, սարսափում են, չեն սիրում: Ամեն ինչ գալիս է իշխանությունից, ու առաջին հերթին դա պետք է փոխվի: Մայիսի 1-ին ես հույս ունեմ տեսնելու այն քանակը, որն այս ընթացքում դեռ չտեսանք, որը բավարար կլինի հիմնական գործողությունների մեկնարկի համար: Բոլորն են հասկանում, որ դրա համար քանակ է պետք: Ես շատ մարդկանց եմ տեսնում, որոնք տարբեր գրառումներ են անում սոցցանցերում, բայց երբ գալիս է գրվածն իրագործելու պահը, անհետանում են: Շատ են փողոցում հանդիպում ու ասում՝ «մի բան արեք, էլի», «ինչ է լինելու մեր դրությունը...», հիմա ասում եմ՝ անում ենք, ու անում ենք մի բան, որտեղ պետք է յուրաքանչյուր սրտացավ մարդու ներկայությունը: Ծրագրերն ու ճանապարհային քարտեզն արդեն բացեիբաց դրված են, «Վերածնունդ»-ի հիմնական նպատակը բաց դրված է:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔՊ-Ն ՆՈՐՄԱԼ Է ՀԱՄԱՐՈՒՄ

ՔՈՉԱՐՅԱՆԻ ՊԱՀՎԱԾՔԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՉԻ ՏՐՎՈՒՄ

Ապրիլի 25-ին ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները փվեարկությամբ մերժել են պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքի վերաբերյալ էթիկայի հանձնաժողով ստեղծելու նախագիծը:

Հիշեցնենք՝ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը մարտի 20-ին լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ պահանջել էր, որ Tribune.am կայքի լրատվական ծառայության ղեկավար Հռիփսիմե Ջեբեջյանն իրենից հեռու կանգնի, եւ ակնհայտորեն չուզենալով նրա հետ զրուցել՝ վիրավորել էր նրան անպարկեշտ արտահայտությամբ: Ստորագրահավաքին մասնակցած կազմակերպություններս դատապարտող հայտարարությամբ անդրադարձել ենք այդ միջադեպին, պահանջել քննել պատգամավորի վարքագիծը եւ գնահատական տալ՝ նախաձեռնելով պատգամավորական էթիկայի հանձնաժողով ձեւավորելու գործընթաց: Հռիփսիմե Ջեբեջյանն իր հերթին 161 լրագրողների ստորագրությամբ նամակ է հանձնել ՀՀ վարչապետին եւ ԱԺ աշխատակազմին այդ նույն պահանջներով: Դժվար է ասել, թե որն է ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում ՔՊ-ական մեծամասնության՝ պատգամավորական էթիկայի հանձնաժողով ստեղծելուն դեմ լինելու հիմնական պատճառը. այն, որ նախագիծը ներկայացրել էին ընդդիմադիր խմբակցությունն՞երը, որոնց առաջարկություններն իշխող ուժը որպես կանոն չի ընդունում, թե՞ սա կուսակցի նկատմամբ համերաշխության դրսեւորում է՝ անկախ նրանից, թե ինչ վարքով է նա աչքի ընկել: Ամեն դեպքում Անդրանիկ Քոչարյանի անվայելուչ պահվածքին գնահատական չտալը եւ գոնե դրա քննարկման համար էթիկայի հանձնաժողով չստեղծելը վկայում են, որ իշխող մեծամասնությունը ոչ մի արտառոց բան չի տեսնում նման կոնֆլիկտներում, նորմալ է համարում լրագրողներին վիրավորելը եւ դրանով իսկ կանաչ լույս է վառում այդպիսի միջադեպերի համար:

Գուցե դա է պատճառը, որ վերջին շրջանում հաճախակի են դարձել պատգամավորների ու ՋԼՄ-ների ներկայացուցիչների միջեւ ընդհարումները: Բավական է հիշել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, պատգամավորներ Խաչատուր Սուքիասյանի, Հովիկ Աղազարյանի, Վիլեն Գաբրիելյանի եւ այլոց անբարեկիրթ վերաբերմունքը տարբեր լրագրողների նկատմամբ:

Համոզված ենք, որ հենց Ազգային ժողովից պետք է սկսել բեւեռացված միջավայրում անպարկեշտ պահվածքի դեմ պայքարը: Մի կողմից քաղաքական գործիչները, այդ թվում՝ խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչները, բողոքում են անհանդուրժողականության մթնոլորտից, մյուս կողմից դրան անդրադառնալու համար ակնհայտորեն անհրաժեշտ քայլ չեն ուզում ձեռնարկել եւ մերժում են էթիկայի հանձնաժողովի ստեղծումը: Իսկ իրավիճակն ԱԺ-ում, մասնավորապես՝ պատգամավորներ-լրագրողներ հարաբերությունների լարվածությունը, շատ ավելի պատասխանատու եւ քաղաքական լայնախոհություն ենթադրող լուծումներ է պահանջում:

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, մեր հիասթափություն ենք արտահայտում առ այն, որ խորհրդարանականները շարունակաբար խուսափում են էթիկայի հանձնաժողով ունենալու գաղափարից, եւ վերահաստատում ենք մեր պահանջը՝ օրենսդրական փոփոխությունն եր իրականացնել՝ այդ մարմնի ձեւավորման գործընթացն առավել պարզեցնելու կամ, ինչը գերադասելի է, պատգամավորական էթիկայի մշտական հանձնաժողով ստեղծելու նպատակով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՁԵԿՈՒՅՑՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այսօր՝ ժամը 11:00-ին, Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում նիստ է գումարվելու: Տեղեկացանք, որ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաղորդում կներկայացնի Հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը: Այնուհետեւ, «Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծ կներկայացնի ՔՊ-ական պատգամավոր Նարեկ Ղահրամանյանը, որի հարակից զեկուցողը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն է: Ի դեպ, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանն էլ կներկայացնի 2024 թվականի գործունեության մասին տարեկան զեկուցում:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԴԵՍՊԱՆԻՆ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանման ղեկավար Անի Մնացականյանն ապրիլի 29-ին ընդունել է ՀՀ-ում Շվեդիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Պատրիկ Սվենսոնին: ՄԻՊ-ից հայտնում են, որ ողջունելով հյուրին՝ Պաշտպանի ներկայացուցիչը դեսպանին ներկայացրել է ստորաբաժանման գործառույթները եւ մարզում մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրները: Քննարկվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված եւ Սյունիքի մարզում բնակություն հաստատած, ինչպես նաեւ մարզի սահմանամերձ բնակավայրերում բնակվող անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցեր: Հանդիպման ավարտին դեսպան Պատրիկ Սվենսոնը շնորհակալություն է հայտնել խնդիրները մանրամասն ներկայացնելու եւ բովանդակալից քննարկման համար:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՐՔ

Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանությունը տեղեկացնում է, որ ապրիլի 30-ին՝ ժամը 10:00-ից մինչեւ 13:00-ը, եւ 15:00-ից մինչեւ 17:00-ը, դեսպանատանը կբացվի ցավակցությունների գիրք: Հիշեցնենք՝ ապրիլի 26-ին Իրանի Բանդար-Աբբաս քաղաքի Շահիդ Ռաջայի առեւտրային նավահանգստում պայթյուն էր տեղի ունեցել, որից հետո հրդեհ էր սկսվել: Վերջին տվյալներով՝ միջադեպի հետեւանքով զոհվել է 46 մարդ, վիրավորվել է ավելի քան 1200-ը:

ԿԻԵՎԸ ՉԻ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ

Կիեւը ոչ մի կերպ չի արձագանքել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից հայտարարված մայիսյան հրադադարին, պարզ չէ՝ Ուկրաինայի զինված ուժերը կմիանան դրան, թե ոչ:

Այս մասին լրագրողներին հայտնել է Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Հենց նախագահ Պուտինն է բարի կամքի ժեստ դրսեւորել եւ երեկ հայտարարել, որ Հաղթանակի օրը, Հաղթանակի տոնին կհայտարարվի ժամանակավոր հրադադար: Կիեւի վարչակարգից արձագանք մենք նույնպես չենք լսել: Եվ առայժմ դժվար է հասկանալ՝ Կիեւի վարչակարգը պատրաստվո՞ւմ է դրան միանալ, թե՞ ոչ»,-ասել է Կրեմլի ներկայացուցիչը: Պեսկովը նաեւ մեկնաբանել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկիի այն խոսքերը, որ հրադադարի մասին Պուտինի նախաձեռնությունը «մանիպուլյացիա է»:

«Ես կասեի, որ ավելի շուտ մանիպուլյացիա է նախագահ Պուտինի այդ նախաձեռնությանն ուղղակի պատասխան չտալը: Դա ավելի քան մանիպուլյացիա է»,-ասել է Կրեմլի ներկայացուցիչը:

ԱԹՍ–ՆԵՐ ԵՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ ՈՒԿՐԱԻՆԱ

Լատվիայի իշխանությունները Ուկրաինա են ուղարկել 1500 անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) հերթական խմբաքանակը: Այս մասին հայտարարել է Բալթյան Հանրապետության պաշտպանության նախարար Անդրիս Սպրուդսը:

«Լատվիայից Ուկրաինա է ուղարկվում եւս 1500 մարտական անօդաչու թռչող սարք: Տարվա առաջին կեսին լատվիական երկու ընկերություններ Կիեւին կմատակարարեն 12000 անօդաչու թռչող սարք՝ անօդաչու թռչող սարքերի կոալիցիայի շրջանակներում»,-գրել է գերատեսչության ղեկավարը X-ում:

Ուկրաինայի կարիքների համար անօդաչու թռչող սարքերի մշակման եւ ձեռքբերման կոալիցիան ստեղծվել է 2024 թվականին Միացյալ Թագավորության եւ Լատվիայի կողմից: Դրան միացան մի շարք այլ երկրներ, այդ թվում՝ Ավստրալիան, Գերմանիան, Դանիան, Կանադան, Լիտվան, Նիդերլանդները, Նորվեգիան, Լեհաստանը, Ուկրաինան, Շվեդիան եւ Էստոնիան:

ՀՀ–ՎՐԱՍՏԱՆ ԿԱՊԵՐ

Աշխարհում բարդ աշխարհաքաղաքական իրավիճակի ֆոնին Հայաստանն ու Վրաստանը շարունակում են խորացնել քաղաքական եւ տնտեսական սերտ կապերը:

Այս մասին ասել է նախագահ Կավելաշվիլին: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության նախագահ Խաչատուրյանն ընդգծել է, որ «Հայաստանը բարձր է գնահատում Վրաստանի աջակցությունը Երեւանի եւ Բաքվի միջեւ խաղաղության համաձայնագրի հարցում»:

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՆՎԵՐՆԵՐ

Ս. ՊԱՊԻԿՅԱՆԸ ՈՍԿԵԶՕԾ ԺԱՄԱՑՈՒՅՑ Է ՆՎԵՐ ՍՏԱՑԵԼ

Մամուլի դիտակետում հայտնված դաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը օրերս նշում էր ծննդյան տարեդարձը: Հունվարի 21-ին Պապիկյանը մի շարք արժանիքների համար ստացել է թանկարժեք նվեր:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողների նվերների հաշվառման ձեւաթղթի» համաձայն՝ Սուրեն Պապիկյանը թանկարժեք նվեր է ստացել եւ հանձնել է պետությանը:

Իսկ ով է նվիրողը եւ ինչ է նվիրել

Հակակոռուպցիոն կոմիտեի նախկին ժամանակավոր ղեկավար Էդիկ Հակոբյանը 170 հազար դրամ արժողությամբ ժամացույց է նվիրել Պապիկյանին: Նախարարը նվերը ստացել է «Օրինականության եւ իրավակարգի ամրապնդման գործում ներդրված ավանդի, ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի հետ սերտ եւ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար, ինչպես նաեւ որպես ՀՀ զինված ուժերի կազմակերպման 33-ամյակի առթիվ պարգեւատրում»: Ժամացույցի տեխնիկական բնութագիրը հետեւյալն է.

««ԳՆՈՄՈՆ» ապրանքանիշի ձեռքի արծաթյա, ոսկեզօծ ժամացույց՝ արծաթյա, 925 հարգի, 25-26 գրամ քաշով, ոսկեպատված բարձր որակի ոսկով, ոչ պակաս 3 մկմ, գոտին բնական կաշի, կարմիր տուփով»:

Հիշեցնենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածում, որով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները, նշվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետեւյալ նվերները.

պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.

կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.

օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Եթե 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Բացի այդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձը եւ հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառեն նվերների հաշվառման ռեեստրում:

40.000 դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ նույն աղբյուրից 6 ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (5 եւ ավելի) բնույթ կրող դեպքերի:

Նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

Հավելենք նաեւ, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին, եթե որեւէ նվեր է տրվում իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված, ապա անկախ դրա չափից, գնից, եթե անգամ այն արժե 100 դրամ՝ չեն կարող ընդունել դա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՂԵԼ ԵՆ ԽՆԱԾԱԽՈՒՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը եւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը նախօրեին գիշերել են Սյունիքի մարզի Տեղ համայնքի Խնածախ բնակավայրում՝ տեղում առկա խնդիրներին, համայնքի առօրյային ու բնակիչների կարիքներին առավել խորությամբ ծանոթանալու նպատակով: Նախարարները հանդիպել են Խնածախի բնակիչներին, զրուցել նրանց հետ, պատասխանել հուզող հարցերին, իսկ այնուհետեւ հանդիպումները շարունակել Վաղատուր եւ Խոզնավար բնակավայրերում: Հանդիպումների ընթացքում նախարար Պապոյանն ընդգծել է, որ պետությունը մշտապես իր քաղաքացիների կողքին է եւ պատրաստ է քայլեր ձեռնարկել համայնքների զարգացման ու տնտեսական կայունության ապահովման ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Արմեն Գրիգորյանը նշանակվել է Արագածոտնի մարզպետի տեղակալ: Այս մասին ասվում է վարչապետի ապրիլի 29-ի որոշման մեջ: «Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Արմեն Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ»:

ԼԱՎՐՈՎԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը Թաիլանդի իր գործընկեր Մարիտ Սանգյամպոնգի հետ քննարկել է առեւտրատնտեսական կապերի ընդլայնումը եւ BRICS-ի շրջանակներում ջանքերի համակարգումը: Այս մասին ասված է ՌԴ ԱԳՆ հայտարարության մեջ՝ Ռիո դե Ժանեյրոյում ԲՐԻԿՍ-ի ԱԳ նախարարների համաժողովի շրջանակում կայացած հանդիպման արդյունքներով: Կողմերը «համեմատեցին ռուս-թայլանդական համագործակցության զարգացման հիմնական հարցերի վերաբերյալ գրառումները՝ ներառյալ քաղաքական երկխոսության խթանումը, առեւտրատնտեսական կապերի ընդլայնումը եւ մարդասիրական փոխանակումները, քննարկեցին BRICS-ի շրջանակներում եւ այլ միջազգային հարթակներում ջանքերի համակարգման թեման»,-ասված է հաղորդագրության մեջ: «Մտքերի փոխանակում է տեղի ունեցել միջազգային եւ տարածաշրջանային օրակարգի արդի հարցերի շուրջ»,- նշվում է տեքստում: Նախարարները պայմանավորվել են շարունակել փոխշահավետ շփումները:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՋՈՒՄ

Ֆինլանդիայի նախագահ Ալեքսանդր Ստուբը չի բացառել, որ Ուկրաինան կարող է ստիպված լինել տարածքային զիջումներ անել: Համապատասխան հայտարարությունը նա արել է The New York Times-ին տված հարցազրույցում: «Նա ընդունեց, որ Ուկրաինան ստիպված կլինի զիջումների գնալ տարածքային հարցում»,-գրում է հրատարակությունը: Միաժամանակ Ստուբը հայտարարել է, որ իր երկիրը չի ճանաչում այդ տարածքները ռուսական: Նա նշել է, որ ավելի վաղ ամերիկացի բանակցողները ուրվագծել էին խաղաղության ծրագրի նախագիծ, որի համաձայն՝ ԱՄՆ-ն կճանաչեր Ղրիմը որպես Ռուսաստանի մաս: Ապա Ուկրաինան եւ եվրոպացիները հանդես եկան հակառաջարկով, որը մերժվեց Մոսկվայի կողմից:

ՈՐՈՇՈՒՄ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՏՈՒՇ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Գլխավոր դատախազը դատավոր Արտուշ Գաբրիելյանի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու համար ԲԴԽ է դիմում: ԲԴԽ-ի համաձայնության թույլտվությունը ստանալուց հետո դատավորին կձերբակալեն: Ավելի ուշ մամուլում տեղեկություններ տարածվեցին, որ Երևանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի շենք են ներխուժել դիմակավորված իրավապահներ և ընդդիմադիր գործիչներին դատող դատավոր Արտուշ Գաբրիելյանին գետնին տապալելով, ձեռքերը ոլորելով բերման են ենթարկել: ArmLur.am-ին Հակակոռուպցիոն կոմիտեից պատասխանատես հայտնեցին, որ այս պահին Շենգավիթի դատարանի նստավայրում քննչական գործողություններ են իրականացվում իրենց վարույթում գտնվող քրեական գործի շրջանակներում:

ArmLur.am-ին հասած տեղեկություններով՝ այդ վարույթը կապ ունի դատավոր Արտուշ Գաբրիելյանի հետ: ArmLur.am-ը Հակակոռուպցիոն կոմիտեից տեղեկացավ, որ կաշառք տալու, ստանալու եւ կաշառք ստանալուն օժանդակելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 29-ին Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Շենգավիթ նստավայրում ՀՀ դատական իշխանության ներկայացուցչի մասնակցությամբ իրականացվել է ապացուցողական գործողություն: Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ առաջին անգամ գործող դատավորի դեմ ապօրինի գույքի բռնագանձման գործով հայցադիմում է ներկայացվել դատարան: Արտուշ Գաբրիելյանի ունեցվածքը կալանքի տակ է: Ասել է թե՝ իշխանության սրտի դատավորը, որը օրերս կարգապահական պատասխանատվության ենթարկվեց, իրավապահների տեսադաշտում է: Հիշեցնենք, որ «Սասնա ծռերի» գործով դատավորը համարձակվեց «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Վահագն Հարությունյանի մասով որոշում կայացնել, նրա խափանման միջոցը ընտրել կալանավորումը: Նրա այս քայլի համար Գաբրիելյանին դատական համակարգում որակեցին «համարձակ տղա»: Նշենք, որ Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 15-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արտուշ Գաբրիելյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

5 անշարժ գույք.

4 տրանսպորտային միջոց.

1 իրավաբանական անձում մասնակցություն.

62 միլիոն 811 հազար դրամ.

1 բնակելի տան միջին շուկայական արժեքի չափով գումար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ

Երեկ Քննչական կոմիտեից հաստատեցին ArmLur.am-ի տեղեկություններն առ այն, որ սահմանապահի զինվորի դեպքով մեկ անձ է ձեռբակալվել: Վերջինս նրա ծառայակից ընկերն է: Հիշեցնենք, որ ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ սահմանապահ զինվորի մահվան գործով հարցաքննվում են ծառայակից ընկերները: Բան այն է, որ իրավապահները տվյալներ ունեն, որ մահացած զինվորը ծառայակից ընկերների հետ խոսակցությունների մեջ է եղել, ասել է թե՝ զորամասում զինվորները ներքին կոնֆլիկտի մեջ են եղել, իսկ թե այդ ներքին կոնֆլիկտը ինչ կապ կարող է ունենալ զինվորի մահվան հետ, հուսանք, կպարզի քննությունը:

Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ ապրիլի 25-ին զորամասերից մեկում սահմանապահ զինվոր է մահացել: Մահացած զինծառայողը Արթուր Ավետիսյանն է, բանակ է զորակոչվել 9 ամիս առաջ: Արթուրը Սիսիանի Աշոտավան համայնքից էր:

Ապրիլի ուշ Քննչական կոմիտեն հայտնեց, որ զինծառայողի մահվան դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: ԱԱԾ-ն եւս անդրադարձավ, որ հաղորդագրություն տարածեց՝նշելով.

«Ս.թ. ապրիլի 25-ին ՀՀ Սյունիքի մարզի ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի ստորաբաժանումներից մեկի ժամկետային զինծառայող Ա.Ա-ն, ըստ նախնական տվյալների՝ իրեն ամրակցված ինքնաձիգից ստանալով հրազենային վնասվածք՝ մահացել է:

Դեպքի հանգամանքները պարզելու համար նախաձեռնվել է քրեական վարույթ եւ իրականացվում է նախաքննություն»: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական վարույթը հարուցվել է ինքնասպանության հասցնելու հատկանիշներով: Այսինքն՝ նախաքննական մարմնում՝ Քննչական կոմիտեում, այս պահին քննում են այն վարկածը, որ զինվորը ինքնասպան է եղել, իսկ թե հետագայում ինչ կպարզվի, կիմանանք հետեւելով քննության ընթացքին:

ԾԵԾԵԼ ԵՆ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ

Ապրիլի 17-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 16:50-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նոր Նորքի բաժնում տեղեկություն է ստացվել, որ «քթոսկրի կոտրվածք» ախտորոշմամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պոլիկլինիկա բուժօգնության է դիմել մի երեխա: Ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները պարզել են, որ նա Երեւանի բնակիչ 14-ամյա Է. Կ.-ն է: Ոստիկանները պարզել են նաեւ, որ նույն օրը՝ժամը 12:00-ի սահմաններում Երեւանի դպրոցներից մեկում վիճաբանության ժամանակ Երեւանի բնակիչներ 14-ամյա Վ. Մ.-ն եւ 16-ամյա Ա. Պ.-ն հարվածել են Է. Կ.-ի դեմքին եւ պատճառել նշված վնասվածքը: Դեպքի փաստով ոստիկանության Նոր Նորքի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՈՐԱԾԻՆ Է ՄԱՀԱՑԵԼ

Ապրիլի 28-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Լոռու մարզում: Ժամը 22:00-ի սահմաններում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Լոռու մարզային քրեական վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ մարզի գյուղերից մեկի տանը երեխայի դի կա: Գյուղ են ժամանել Լոռու մարզային քրեական վարչության օպերատիվ խումբը վարչության պետ Խորեն Բարխոյանի գլխավորությամբ: Տեղում պարզվել է, որ տեղեկությունը հավաստի է: Նշված տանը քրեական ոստիկանները հայտնաբերել են 4 ամսական Գեղամ Ֆ.-ի դին: Դեպքի մասին քրեական ոստիկանությունից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն, որտեղից ժամանել է քննչական խումբը՝վարչութաան պետի, տեղակալի եւ հերթապահ քննիչի գլխավորությամբ: Դեպքի փաստով քննչական վարչությունում «սպանություն» (հանկարծամահություն, դժբախտ պատահար) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Ըստ նախնական տեղեկությունների՝ երեխայի մայրը ժամը 17:00-ի սահմաններում տղային կաթ է տվել, ապա գնացել աշխատանքի, ով որպես կթվորուհի աշխատում է անասնագոմերից մեկում, եւ ժամը 21:50-ի սահմաններում վերադառնալով տուն՝ երեխային հայտնաբերել է մահացած:

ՀՐԴԵՀ՝ ՇԵՆՔԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ

Ապրիլի 29-ին՝ ժամը 14:26-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Շիրակի փողոցի շենքերից մեկի 5-րդ հարկում: Այս մասին տեղեկացնում է ՆԳՆ Փրկարար ծառայությունը: Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից երկու մարտական հաշվարկ եւ մեկ ավտոսանդուղք: Հայտարարվել է հրդեհի բարդության «1 ԲԻՍ» աստիճան. դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից եւս երկու մարտական հաշվարկ, Բժշկական ապահովման վարչության հերթապահ եւ Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ խմբերը:

ՄԻ ՇԱՐՔ ԸՆՏՐԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

«ՀայաՔվե» ազգային քաղաքացիական միավորումը՝ «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» եւ «Երիտասարդական ակումբների դաշնություն» ՀԿ-ների հետ համատեղ, 2025 թ. մարտի 16-ից մինչեւ ապրիլի 7-ը ՀՀ Գյումրի եւ Փարաքար համայնքներում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին մասնակցել է անկախ դիտորդի կարգավիճակով՝ իրականացնելով ընտրական գործընթացի մշտադիտարկում, ներառյալ քվեարկության դիտորդական վերահսկողություն 14 եւ 31 ընտրատարածքների 98 ընտրական տեղամասերում, հայտնում են նախաձեռնությունից: Նշվում է, որ աշխատանքի արդյունքում «ՀայաՔվե» միավորման կողմից ներգրավված դիտորդները արձանագրել են մի շարք ընտրախախտումներ, որոնք ուղարկվել են ՀՀ-ում հավատարմագրված բոլոր օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություններին (դեսպանություններին եւ միջազգային կազմակերպությունների գրասենյակներին):

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 28-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 114 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԴ

14-ԱՄՅԱ ՏՂԱՅԻՆ ԱՌԵՎԱՆԳԵԼ Է, ԾԵԾԵԼ

Տավուշի Բերդ քաղաքում արտառոց դեպք է եղել: Ապրիլի լույս 21-ի գիշերը մոտ 40 տարեկան պայմանագրային զինծառայողը նույն քաղաքի բնակիչ14-ամյա տղային վերջինիս տան բակից նստեցրել է ավտոմեքենան, զրուցելու պատրվակով երեխային տարել քաղաքի ծայրը, այնտեղ սպառնացել նրան, ծեծի ենթարկել: Տղան վզի եւ այտի շրջանում ստացել է վնասվածք, առկա են կապտուկներ եւ քերծվածքներ, նրա շորերը պատռվել են: Բերդից ստացված տեղեկություններով՝ երբ 40-ամյա տղամարդը կանչել է, անչափահաս տղան շփոթված է եղել, վախեցած, չի հասկացել,թե ինչ է կատարվում, նրա հեռախոսը տանն է եղել, չի կարողացել տնեցիներին զանգել: 40-ամյա տղամարդու քենու աղջիկը եւ առեւանգված տղան նույն՝ Բերդի թիվ 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանում են սովորում, աղջկա մորաքրոջ ամուսինը որոշել է տղային պատժել իր կնոջ քրոջ աղջկա հետ կատարվածի համար: Իրազեկ աղբյուրները հայտնում են, որ 9-րդ դասարանցի աղջիկը շուրջ մեկ տարի ինքն իրեն մերկ տեսանկարել, լուսանկարել է ու այդ տեսանյութերը ուղարկել է համադասարանցի տղաներին: Երբ այդ նյութերը շատ տարածվել են, աղջիկը համադասարանցի տղային է մեղադրել, թե իբր տղան է ֆոտոշոփով դրանք սարքել, տարածել: Դեպքից տեղյակ մարդիկ ասում են, որ ոչ թե մեկ, այլ շուրջ 25 տեսանյութեր են տարածվել, դրանցում հստակ լսվում է աղջկա ձայնը: Դեպքի կապակցությամբ Իջեւանում, 6-րդ կայազորի զինվորական ոստիկանությունում քրեական վարույթ է հարուցվել, տղային ծեծի ենթարկելու հետեւանքով մարմնական վնասվածքների վերաբերյալ դատաբժիշկը եզրակացություն է տվել: 14-ամյա տղայի հեռախոսը քննիչը վերցրել է՝ փորձաքննություն անցկացնելու համար:

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՈՍԿԵՊԱՐԻՑ ԱՐՏԱԳԱՂԹՈՒՄ ԵՆ

Սահմանազատման անվան տակ Կիրանց-Ոսկեպար-Բաղանիս հատվածում 30 տարի ամրացված դիրքերը, Կիրանցի հողերը Ադրբեջանին հանձնելու, սահմանազատման հետագա փուլի հետ կապված անորոշության, Հայաստանի անվտանգության մտահոգիչ վիճակի հետեւանքով սահմանամերձ, հերոսական Ոսկեպար գյուղից վերջերս 2 ընտանիք արտագաղթել է Ռուսաստան: Ոսկեպարից հայտնում են, որ եւս 2 ընտանիք նման մտադրություն ունի: 1980-ական թվականների կեսին Ոսկեպարի 8-ամյա դպրոցում սովորում էր 330 աշակերտ, Հայաստանի անկախության տարիներին արտագաղթի հետեւանքով այժմ Ոսկեպարի միջնակարգ դպրոցն ունի 77 աշակերտ: Ոսկեպարցիների զգալի մասը հաստատվել է Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաքում, Վորոնեժում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԻՆՉ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ԾԱՎԱԼՎԵԼ

Հայոց Ցեղասպանության 110-րդ տարելիցի կապակցությամբ Երեւան է այցելել թուրք գրող, պատմաբան Թաներ Աքչամը: Երեկ «Հայ հեղափոխական Դաշնակցություն» կենտրոնում նա հանդիպում է ունեցել հայ մտավորականների հետ: Քննարկմանը գրողը հանդես եկավ ելույթով, որի ժամանակ ներկայացրեց Թուրքիային դատապարտող իր գրքերը եւ նրանց ամփոփ բովանդակությունը: «Եթե պարիկիդ պարիկն այլազգի է ու այլադավան, արդա նա տեղ չունի Թուրքիայում: Օրինակ՝ դու հայ ես, քրիստոնյա ես ու դու չգիտես այդ մասին, բայց պետությունը տեղյակ է եւ որեւէ արտոնություն չի տալիս քեզ առաջ գնալու, հեռանկարներ ունենալու կամ կարիերա ստեղծելու համար:

Թուրքիայում 1915 թվականից հետո այնպիսի մեխանիզմ է իրականացվել, ինչպես իրականացվեց Հարավային Աֆրիկայում: Քրիստոնյաները որեւէ կերպ չեն կարողացել բարձրանալ այն բուրգը, որ բարձրանում էին մուսուլմանները: Իմ գրքում դուք կտեսնեք այդ խտրականությունը եւ դրանք դատապարտող բոլոր իմ դիրքորոշումները»,- ելույթի ժամանակ ասաց Թաներ Աքչամը: Նշենք, որ, բավականին լավ տիրապետելով անգլերենին՝ գրողը ելույթ ունեցավ իր մայրենի լեզվով՝ թուրքերենով:

Նշենք, որ ապրիլի 23-ին Երեւանում կայացավ նրա՝ Հայոց Ցեղասպանությունը դատապարտող հերթական գրքի շնորհանդեսը:

Այս անգամ իր ընթերցողին նա ներկայացրեց «Ցեղասպանական պետության ակունքները» վերնագիրը կրող գիրքը: Հանդիպման ժամանակ ամփոփ ներկայացրեց նաեւ իր գրքերում զետեղված 1915 թվականի իրադարձությունները:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԵՊՔԸ

Առողջապահության փորձագետ Ծաղիկ Վարդանյանը գրել է. «Այսօր նորից արձանագրվել է շտապօգնության բրիգադի նկատմամբ բռնության դրսեւորում՝ քաղաքացին դանակով հարձակվել է բուժաշխատողի վրա: Վերջին տարիներին Հայաստանում հաճախացել են բժշկական ոլորտի աշխատակիցների նկատմամբ բռնության դեպքերը: Ըստ ներքին գործերի նախարարության տրամադրած տվյալների՝ 2023-2025 թթ. ընթացքում արձանագրվել է 27 նմանատիպ դեպք: Այս տարվա առաջին երկու ամիսների ընթացքում արդեն գրանցվել էր 4 դեպք՝ Շիրակի մարզի Ազատան գյուղում, Վայոց ձորում եւ Երեւանում: Երեք դեպքում բռնության թիրախում եղել են շտապօգնության բուժաշխատողները, մեկում՝ հիվանդանոցի անձնակազմը: Այժմ արձանագրվեց նաեւ բժշկական ոլորտի աշխատակիցների նկատմամբ բռնության այս տարվա 5-րդ դեպքը: Իրականում բռնության փորձերը բուժաշխատողների նկատմամբ ավելի շատ են: Հիմնականում այն ոստիկանություն չի հասնում, տեղում «հաշտեցման» գործընթաց են նախաձեռնում: Ավելի խոցելի են շտապօգնության, վերակենդանացման բաժանմունքի, ընդունարանի, EMERGENCY, հոգեբուժական, նարկոլոգիական ծառայությունների բուժանձնակազմերը:

2025 թվականի սկզբից Առողջապահության ոլորտի կառավարիչները, Ազգային ժողովի պատգամավորները պաթոսով խոսում են բուժաշխատողի նկատմամբ բռնության անթույլատրելիության մասին եւ հայտնում, որ նախաձեռնել են իրավական կարգավորումներ, այլ գործիքակազմի ներդրում, եւ այլն: Մոռացել են, որ հենց իրենք էլ հանել են գործող հոդվածը ՔՕ-ից»:

ՀԱՅ ԴԱՏԸ ԴԻՄԵԼ Է ԵԱՀԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻՆ

ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակը Բաքվում պահվող 23 հայ գերիների (ներառյալ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները) ազատ արձակմանն աջակցելու համար դիմել է Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) պատասխանատուներին՝ առաջարկելով, որ գործարկեն ԵԱՀԿ-ի տրամադրության տակ գտնվող գործիքակազմերը՝ ԵԱՀԿ շրջանակում Ադրբեջանի հանձնառությունների համատեքստում գնահատելու օրենսդրական եւ վարչական ընթացակարգերը, փաստերը արձանագրելու, ինչպես նաեւ համապատասխան առաջարկներ եւ խորհրդատվություններ կատարելու համար: Այս մասին հայտնում են ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակից: «ԵԱՀԿ-ի բարձրաստիճան պաշտոնյաներին փոխանցված են նաեւ մի շարք տեղեկություններ Ադրբեջանում դատական համակարգի թերությունների, ինչպես նաեւ հաշվետվություն հայ գերիների՝ տարբեր պետությունների եւ միջազգային կազմակերպությունների դիրքորոշումների մասին: Միաժամանակ, շարունակում է գործել ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակի կողմից ստեղծված հարթակը՝ https://armeniancause.net/ հասցեով, որտեղ հնարավոր է ստորագրել առցանց խնդրագիր՝ ուղղված ԵԱՀԿ համապատասխան պաշտոնյաներին:

Յուրաքանչյուր օրը ճակատագրական է մեր գերիների բարօրության ու կյանքի համար: Միջազգային հանրությունը պետք է ճնշում գործադրի Ադրբեջանի եւ նախագահ Իլհամ Ալիեւի վրա, որպեսզի դադարեցվեն մարդու իրավունքների կոպիտ խախտումներն ու ազատ արձակվեն ապօրինի կերպով ձերբակալված բոլոր հայ գերիները: Ստորագրությունների թիվը ներկայումս հասել է վեց հազարի, սակայն անհրաժեշտ է մեծացնել այն: Ուստի, ՀՅԴ Հայ դատի կենտրոնական գրասենյակը, նրանց, ովքեր դեռեւս չեն միացել հիշյալ պահանջին, խնդրում է ստորագրել խնդրագիրը եւ օժանդակել Բաքվում ապօրինի պահվող հայ գերիների ազատ արձակման աշխատանքներին»:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՃԻ ՏԵՄՊԸ ԱՐԱԳ Է ԲԱՐՁՐԱՆՈՒՄ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամը վերլուծել է ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2025թ. հունվար-մարտ ամիսներին: Այսպես՝

ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպն էականորեն դանդաղել է: Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված է համեմատվող ցուցանիշներում ոսկու վերաարտահանման ազդեցության, ինչպես նաեւ նախորդ տարիներին բարձր աճ ապահովող գործոնների չեզոքացմամբ: Վերջինս սպասելի երեւույթ էր, եւ նման միտումների պահպանման պարագայում տնտեսական աճը տարվա համար կառավարության կանխատեսումներից ավելի ցածր կլինի:

Արտահանման ծավալները էականորեն նվազել են: Արտահանման անկումը հունվար-մարտին կազմել է 61.8%՝ հունվար-փետրվարի համեմատ վատթարանալով 2.6 տոկոսային կետով: Մտահոգիչ է սակայն այն, որ արտահանման նվազումը պայմանավորված է ոչ միայն ոսկու վերաարտահանման չեզոքացմամբ, այլ նաեւ մյուս ապրանքախմբերի արտահանման անկումներով կամ ցածր աճերով: Այսպես, եթե չդիտարկենք «թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստումը, ապա արտահանման աճը, միեւնույն է, բացասական է՝ -2.4%, ինչը ցույց է տալիս, որ խնդիրներն ավելի խորն ու մտահոգիչ են:

Գնաճի տեմպը բավական արագ է բարձրանում: Բավական երկար ժամանակ ցածր գնաճային միջավայրից հետո գների աճի տեմպն արագորեն մեծանում է՝ մարտին հասնելով 3.3%-ի: Այդ պայմաններում կենտրոնական բանկն արդեն իսկ դադարեցրել է տոկոսադրույքի նվազեցման քաղաքականությունը: Գնաճի հետագա արագացումը, տնտեսական աճի դանդաղման պայմաններում, կարող է բացասաբար ազդել բնակչության կենսամակարդակի վրա: Վարկերի աճի տեմպը շարունակում է արագանալ: Տնտեսական աճի գրանցված մակարդակի, ինչպես նաեւ բնակչության եկամուտների ցածր աճերի պայմաններում վարկերն աճում են շուրջ 30%-ով: Ընդ որում, վարկերի աճին հիմնականում նպաստում են սպառողական եւ հիպոթեքային վարկերը, որոնք հետագա տարիներին տնտեսական արդյունք չեն գեներացնելու: Հետեւաբար, վարկերի նման բարձր աճերը մտահոգիչ են եւ կարող են պարունակել ֆինանսական համակարգի կայունության հետ կապված ռիսկեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Նաիրա Դանոյանս, կորցրել եմ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն բաժնի կողմից 2016 թվականին ինձ տրամադրված ավարտական (բակալավրիատ) դիպլոմս:

ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ՋԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱԶԱՅԻՆ ՏՈՒՐՔԸ ԿԴԱՌՆԱ 15 ՄԼՆ ԴՐԱՄ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ: Պատգամավորն առաջարկում է փոփոխություններ կատարել «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում, լրացում կատարել «Պետական տուրքի մասին եւ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում»: Օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է ժամկետային զինվորական ծառայության սահմանային տարիքը 27-ից դարձնել 37 տարի: Առաջարկվում է նաեւ մինչեւ 18 տարեկան արական սեռի քաղաքացիների համար ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար բազային տուրքը դարձնել 15 մլն դրամ: Սա այն գումարն է, որը 27 տարին լրացած եւ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած ՀՀ քաղաքացիները կարող են վճարել եւ ազատվել քրեական պատասխանատվությունից: Քրեականացնել Քրեական օրենսգրքի 461-րդ (Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը) հոդվածի կամ 462-րդ (Վարժական հավաքից խուսափելը) հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելը կամ խուսափելը կամ հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը:

Պատգամավորն առաջարկում է սույն օրենսդրական փոփոխությունների արդյունքում գոյացող լրացուցիչ ֆինանսական միջոցների մի մասն ուղղել պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ ծառայության ընթացքում կրտսեր ենթակայական կազմի զինվորական կոչում ստացած եւ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր չկնքած զինծառայողների) դրամական ապահովության չափերի բարձրացմանը: Ներկայումս շարքային զինվորական կոչում ունեցող ժամկետային զինծառայողները ստանում են ամսական 3,400 ՀՀ դրամ դրամական ապահովություն:

Կրճատված ժամկետով զինվորական ծառայության հնարավորություն տալ նաեւ 18 տարեկաններին, գործող օրենսդրությամբ նման հնարավորություն ունեն 27 տարին լրացած քաղաքացիները:

Օրենսդրական նախաձեռնության հիմնավորման մեջ նշվում է, որ Օրենսդրական նախաձեռնության եւ կից առաջարկվող կառավարության որոշումներում փոփոխություններ կատարելու նպատակն է մեծացնել պարտադիր զինվորական ծառայության զորակոչվողների թիվը, կանխել մեծ թվով արական սեռի քաղաքացիների ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու դեպքերը, կանխել մեծ թվով արական սեռի քաղաքացիների՝ մինչեւ 37 տարին լրանալը հետախուզման մեջ մնալը եւ այլն:

Իսկ թե ինչն է ստիպել հանդես գալ նման նախաձեռնությամբ, պատգամավորը նաեւ նախագծում առանձնացրել է ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները:

Վերլուծելով վերջին 10 տարիների արդյունքները՝ ստացվել է, որ զինվորական պարտադիր ծառայության հրավիրվածների 30-ից 40 տոկոսն է զորակոչվում ծառայության: Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը մեր երկրում 24 ամիս է, մինչդեռ հարեւան Վրաստանում 6-11 ամիս, Թուրքիայում՝ 6, Ադրբեջանում՝ 18 ամիս: Ծառայության ժամկետի երկար լինելը ծառայության գրավչության վրա ազդող հիմնական գործոններից է: Ծառայության ժամկետի երկար լինելով եւ այլ գործոններից ելնելով՝ մեծ թվով քաղաքացիներ խուսափում են զինվորական ծառայությունից մի շարք ճանապարհներով:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆՆ ՈՒԶՈՒՄ Է ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՊԱՀԵԼ ՎԱԽԻ ՄԵՋ

Ռազմական փորձագետ Դավիթ Ջամալյանը վստահ է՝ Ադրբեջանը Սյունիքում, Գեղարքունիքում կրակոցներ արձակելով՝ ուզում է սահմանին ապրող բնակիչներին նախ պահել վախի մեջ, հետո ստիպել, որպեսզի լքեն իրենց գյուղերը, որի պարագայում առաջ գալն ու նոր հայկական տարածքներ գրավելն ավելի հեշտ կլինի:

«Ադրբեջանի լայնածավալ ագրեսիայի գնալու նկրտումները զսպում է ռուս-իրանական դաշինքը, հակառակ դեպքում՝ վաղուց նա կդիմեր ռազմական գործողությունների, հատկապես, որ Հայաստանն ունի անգործունյա իշխանություն: «Ադրբեջանական ագրեսիան զսպում է ռուս-իրանական դաշինքը, որի հետ Ալիեւը չի կարող հաշվի չնստել: Եթե Իրանը թուլանա, Թրամփի հակաիրանական քաղաքականությունն էլ արդյունք տա, ապա ադրբեջանական հարվածի հավանականությունը կմեծանա: Կա նաեւ մեկ այլ հակազդող գործոն՝ Ռուսաստանն է, որ ուկրաինական ճակատում ապացուցեց իր հզորությունը, որի հետ չեն կարող հաշվի չնստել: Այս իրավիճակը Ռուսաստանին թույլ է տալիս իր հայացքն ուղղել այն ուղղությունների վրա, որտեղ ունի կենսական շահեր»,-այս մասին նշել է Դավիթ Ջամալյանը՝ խոսելով Սյունիքի եւ Գեղարքունիքի ուղղությամբ ադրբեջանական ամենօրյա կրակոցների նպատակների եւ դրա հնարավոր վտանգների մասին:

Նա չի բացառում սահմանափակ ուժերի ընդգրկմամբ մարտական գործողությունների հավանականությունը, որոնք կունենան տեղային բնույթ, ինչին հայ հասարակությունը պետք է պատրաստ լինի, հատկապես՝ հոգեբանորեն, որպեսզի կարողանան արագ մոբիլիզացվել:

«Ադրբեջանը հիմա այդ կրակոցներով փորձում է մեր հասարակությանն ահաբեկել, իսկ ահաբեկված հասարակությանը դժվար է մոբիլիզացնել, նաեւ ահաբեկված հասարակությունը կարող է լքել իր բնակավայրը, որի արդյունքում ավելի հեշտ կլինի հակառակորդին առաջ գալը: Բնակավայրերը դատարկելու կարճ ճանապարհին անընդմեջ կրակելն է, մարդկանց մշտապես տագնապի մեջ պահելը: Եթե մենք ազգային իշխանություն ունենայինք, ապա մենք հավուր պատշաճի պատասխան կտայինք ագրեսիվ գործողություններին, որոշ դեպքերում կանխարգելիչ հարվածներ կհասցնեին, այսինքն՝ կընտրեին թշնամուն զսպելու գործիքակազմը: Բայց ունենք այն, ինչ ունենք»,- հավելել է նա: Ըստ նրա՝ Հայաստանում ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ելքն իշխանափոխությունն է: Եթե լինի իշխանափոխություն, ապա կարճ ժամանակում հնարավոր կլինի վերականգնել ուժերը, դրա բոլոր հնարավորությունները կան, օգտագործելով նաեւ արտաքին քաղաքական ռեսուրսը:

«Հայաստանը պետք է կրկին վերածվի գործոնի, որպեսզի կարողանա զսպել թշնամուն՝ վերադարձնելով իր կորուստները, հակառակ պարագայում հետագա կորուստներն անդառնալի կարող են լինել մեր երկրի համար»,- ընդգծել է Դավիթ Ջամալյանը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱԳ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայաստանի ազգային գրադարանում մեկնարկել է «Ֆրանսիա-Հայաստան. պատմական եւ մշակութային երկխոսություն» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը: Բացմանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին, Հայաստանի եւ Ֆրանսիայի ազգային գրադարանների տնօրենները, գրադարանային ոլորտի մասնագետներ, գրադարանավարներ: Գիտաժողովն անցկացվում է Հայաստանում ֆրանկոֆոնիայի երկամյակի միջոցառումների շրջանակում:

Երկկողմ համագործակցության համատեքստում Ժաննա Անդրեասյանը շեշտել է կարողությունների զարգացմանը միտված կրթական ծրագրերի իրականացումը՝ նշելով, որ գրադարանային ոլորտում համագործակցությունը պետք է ուղղվի նաեւ տեխնոլոգիական զարգացմանը:

Ողջույնի խոսքով հանդես են եկել նաեւ ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Աննա Չուլյանը:

Գիտաժողովի նպատակն է համակողմանիորեն ներկայացնել Հայաստան-Ֆրանսիա պատմական ու մշակութային բազմաշերտ հարաբերությունները: Գիտաժողովին մասնակցում են անվանի հետազոտողներ, գիտնականներ եւ ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ, որոնք հանդես կգան զեկույցներով եւ քննարկումներով՝նվիրված երկու երկրների բազմադարյա հարաբերություններին, գրական ու մշակութային կապերին, հրատարակչական ժառանգությանը եւ այլ թեմաների: Գիտաժողովի գլխավոր բանախոսը Ֆրանսիայի ազգային գրադարանի նախագահ Ժիլ Պեկուն է: «Ֆրանսիա-Հայաստան. պատմական եւ մշակութային երկխոսություն» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովի շրջանակում ստորագրվել է փոխըմբռնման եւ համագործակցության հուշագիր: Փաստաթուղթը ստորագրել են Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Աննա Չուլյանը եւ Ֆրանսիայի ազգային գրադարանի նախագահ Ժիլ Պեկուը:

Գիտաժողովի ընթացքում առանձին ցուցասրահում տեղի կունենա հայաստանյան հրատարակչությունների գրքերի ցուցահանդես, որտեղ կներկայացվեն հայ-ֆրանսիական փոխառնչություններին նվիրված հրատարակությունները, ֆրանսիական գրականության թարգմանությունները եւ այլն: Գրադարանի մեծ ցուցասրահում առաջին անգամ կներկայացվեն ՀԱԳ անձեռնմխելի գրականության բաժնի՝ Ֆրանսիայում հրատարակված հայերեն եւ ֆրանսերեն հնատիպ գրականության եւ մամուլի բացառիկ նմուշներ:

Գիտաժողովի հանդիսավոր փակումը կկայանա ապրիլի 30-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, այնուհետեւ տեղի կունենա «Վերադարձ դեպի «Տիգրանի մետամորֆոզները»» համերգային ծրագիրը: Կհնչեն հատվածներ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների օպերաներից, որոնք առնչվում են հայոց պատմությանն ու մշակույթին: Համերգային ծրագիրը նվիրված է գիտաժողովի պատվավոր բանախոս Ալեքսանդր Սիրանոսյանին, որը հեղինակել է հայկական թեմաներով եվրոպական օպերաներին նվիրված հրատարակություն:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՄԵԿՆԵԼ Է ՊԵՐՈՒ

Հայաստանի պատվիրակությունը մեկնել է Պերու, որտեղ ապրիլի 30-ից մայիսի 5-ը կմասնակցի պատանիների եւ երիտասարդների աշխարհի առաջնությանը: Այս մասին հայտնում է Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի մամուլի քարտուղարությունը: Հիշեցնենք՝ Հայաստանի հավաքականը պատանիների եւ երիտասարդների աշխարհի առաջնությանը կմասնակցի ընդհանուր 7 մարզիկով՝5 տղա, 2 աղջիկ: Երիտասարդների հավաքականի մարզիչները Մելիք Ղուկասյանն ու Դավիթ Մուրադյանն են, պատանիներինը՝ Երվանդ Կիրակոսյանը, իսկ կանանց թիմինը՝ Տարոն Թոմվասյանը: Հայաստանի պատվիրակության ղեկավարը կլինի Ծանրամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Սամվել Գասպարյանը:

ԽՈՍԵԼ Է ԱՊԱԳԱՅԻՑ

Իտալական «Ատալանտա» ակումբի գլխավոր մարզիչ Ջան Պիերո Գասպերինին խոսել է իր ապագայի մասին: Բերգամոյի թիմի մարզիչը պաշտոնը զբաղեցնում է արդեն 9 տարի: «Մենք կքննարկենք դա, երբ եւ եթե հասնենք մեր նպատակին: Ես երբեք չեմ ասել, որ կհեռանամ: Ավելի շուտ ես ասել եմ, որ չի երկարաձգի պայմանագիրը, եւ սրանք երկու տարբեր բաներ են: Մեր նպատակն այժմ Չեմպիոնների լիգա դուրս գալն է», - մասնագետի խոսքերն է մեջբերում Sky-ը: Իտալիայի առաջնության 34 տուրերի արդյունքներով Գասպերինիի թիմը 65 միավորով երրորդ տեղում է:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

«Լիվերպուլն» ակումբի համար գրեթե ռեկորդային ծախսեր է նախատեսում գալիք ամռանը տրանսֆերային պատուհանի ժամանակ: The Telegraph-ը հաղորդում է, որ ակումբի խորհուրդը կհատկացնի ակումբի պատմության մեջ ամենամեծ տրանսֆերային բյուջեներից մեկը, քանի որ նրանք նպատակ ունեն նվաճել ռեկորդային՝ 21-րդ չեմպիոնական տիտղոսը:

«Կարմիրները» հասկանում են, որ հաջորդ մրցաշրջանում մրցակցությունը, ամենայն հավանականությամբ, ավելի բարձր կլինի, ուստի նրանք նախատեսում են այս ամառ ավելի ակտիվ գործել, քան անցյալ տարի: Ընդգծվում է, որ «Լիվերպուլի» հիմնական նպատակներն են կենտրոնական հարձակվողը եւ ձախ պաշտպանը:

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Ռեալ Մադրիդի» դարպասապահ Տիբո Կուրտուան կարող է նոր աշխատանքային պայմանագիր կնքել «Արքայական ակումբի» հետ: Մադրիդում ցանկանում են ֆուտբոլիստին թիմում պահել ավելի երկար ժամանակով: Աղբյուրի փոխանցմամբ՝ կողմերը կարող են մոտ ապագայում երկարաձգել իրենց համագործակցությունը մինչեւ 2028 թվականի կեսերը:

Բելգիացի դարպասապահի եւ «Ռեալի» միջեւ գործող պայմանագիրը լրանում է հաջորդ ամռանը: Տիբոն մադրիդյան թիմում հանդես է գալիս 2018 թվականի ամռանից:

ԺԱՄԱՆՑ

ԿԻՐԿՈՐՈՎԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է ՀՐԴԵՀԸ

Ֆիլիպ Կիրկորովը մեկնաբանել է միջադեպը «Օկտյաբրսկի» մեծ համերգասրահում՝կապված պիրոտեխնիկայի հետ: Ապրիլի 25-ին Կիրկորովը այրվածք է ստացել ելույթի ժամանակ: Երաժիշտը իջնում էր բեմ հսկայական միկրոֆոնով, երբ բռնկվել է նրա պիջակը: Կիրկորովը մի քանի անգամ տեղեկացրել է, որ այրվում է, իջել է բեմ եւ անցել կուլիսներ: Կերպարը փոխելուց հետո երգիչը շարունակել է համերգը: «Առաջին անգամ ինձ այսպես տապակեցին, այո: Ոչինչ, հո ողջ մնացի: Չայրվեցի: Ես Փյունիկ թռչնի նման եմ, մեկ այրվում եմ, մեկ վերածնվում: Գլխավորը, որ հանդիսատեսը գլխի չընկավ, իսկ վերքերը կլավանան»,- Կիրկորովին մեջբերել է «Ստարխիտը»: Կիրկորովը հավաստիացրել է, որ իր թիմից ոչ ոք չի ազատվել միջադեպից հետո: «Ամեն բան լավ է: Գլխավորը, որ մենք երկու համերգ տվեցինք: Հանդիսատեսը դրանից չտուժեց: «...» Այդպես պատահում է: Սա մարդկային գործոն է, այդպես պատահեց: Սա անհեթեթ հանգամանք է, ոչ ոք մեղավոր չէ»,- ասել է արտիստը:

«ԿՆՔԱՀԱՅՐԸ»՝ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՖԻԼՄ

Սթիվեն Սփիլբերգը «Կնքահայրն» անվանել է «երբեւէ ստեղծված մեծագույն ամերիկյան ֆիլմը», Ռոբերտ դե Նիրոն հեգնանքով տրտնջացել է, որ իրեն վերցրել են սիքվելում, այլ ոչ թե օրիգինալում, իսկ Հարիսոն Ֆորդը դժվարությամբ է զսպել արցունքները՝ հիշելով իր դերը 1974թ. «Խոսակցություն» ֆիլմում: Այս ամենի կենտրոնում Ֆրենսիս Ֆորդ Կոպոլան էր, որն ստացել է AFI Life Achievement Award մրցանակը Dolby Theatre-ում տեղի ունեցած հանդիսավոր արարողության ժամանակ, որը համախմբել է լեգենդար աստղերին՝թվում է, թե անցյալ կինոյի դարաշրջանից, հայտնել է AP-ն:

«Երբ ես երեխա էի, կար «Օսկարի» մրցանակաբաշխություն եւ վերջ: Այժմ նրանք պատրաստվում են մրցանակաբաշխություն անցկացնել լավագույն մրցանակաբաշխության համար»,- ասել է 86-ամյա ռեժիսորը ցուցադրությունից առաջ կարմիր գորգի վրա: «Բայց դա մի փոքր տարբերվում է, որովհետեւ դա մարդկանց անձնական ճանաչումն է, որոնց դուք իմացել եք ողջ կյանքում, եւ ձեր բազմամյա գործընկերների, այնպես որ սա ինքնատիպ վերադարձ է տուն»:

«Դուք, սըր, աննման եք: Դուք վերցրել եք այն, ինչ կար առաջ, եւ վերիմաստավորել եք ամերիկյան կինոյի կանոնը»,- ասել է Սփիլբերգը:

Կոպոլան նստած էր Սփիլբերգի եւ Ջորջ Լուկասի միջեւ, մինչ դերասանները եւ գործընկեր ռեժիսորները, Սփայկ Լին, Դասթին Հոֆմանը, Ալ Պաչինոն եւ Մորգան Ֆրիմենը հերթով հիանում էին լեգենդար ռեժիսորով: Լուկասը՝ Կոպոլայի վաղեմի ընկերն ու գործընկերը, նրան հանձնեց մրցանակը: «Դուք հավաքել եք երիտասարդ ուսանող կինեմատոգրաֆիստների, հավաքել եք հետ մեզ միասին: Մենք եկել ենք Սան Ֆրանցիսկո՝հուսալով հաղթել համակարգին: Եվ մենք դա արեցինք: Ինչպես եւ ռեժիսորները արվեստի այս տեսակի արշալույսին, մենք կանոններ չունեինք: Մենք գրում էինք դրանք, իսկ դուք բռնում էիք գրիչը»,- ասել է Լուկասը:

● Կ. Ստանիսլավսկու անվան թատրոնում մայիսի 14-ին տեղի կունենա «Ավետիք Իսահակյան. հոբելյանական երեկո» մշակութային երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-10.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե մասնակի կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում որ ժամանակաշրջաններն են հաշվառված:

Դիանա Մելքոնյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դ. Մելքոնյանի հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ մասնակի կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում է միայն մինչեւ 2003 թվականի օգոստոս 1-ը ներառյալ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոններում եւ մասնագիտություններով աշխատած ժամանակահատվածը:

Օրինակ.

55 տարեկան անձը դիմել է մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցով:

Նրա աշխատանքային գործունեությունը բաղկացած է հետեւյալ ժամանակահատվածներից.

1966-1968թթ.՝ ժամկետային զինծառայող,

1968-1972թթ.՝ մանկավարժական ինստիտուտի ուսանող,

1972-1975թթ.՝ թանգարանում էքսկուրսավար,

1975-1978թթ.՝ ուսումնարանում վարպետ,

1978-2009թթ.՝ դպրոցում մանկավարժ:

Նրան մասնակի կենսաթոշակ կնշանակվի 1972-1975թթ. եւ 1978-2003 թթ. աշխատանքային ստաժի (28 տարի) համար:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության ցանկացած տարածքային կենտրոն:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս են մեկնաբանվում հոգեկան խանգարումներն Աստվածաշնչում եւ արբերի մեկնություններում: Ինչի՞ հետեւանք են եւ ինչպե՞ս կարող են դրանք բժշկվել: Կա՞ն արդյոք աղոթքներ հոգեկան խանգարումների բժշկության համար:

Մանուշակ Պողոսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հոգեկան հիվանդություններ» հասկացությունը ժամանակակից հասկացություն է: Աստվածաշնչում կան որոշ դրվագներ Տիրոջ կողմից հիվանդների բժշկության մասին, որտեղ հիվանդության նկարագրությունը նման է հոգեկան հիվանդության: Սակայն Աստծո խոսքի նկատմամբ ամենայն հարգանքով պետք է ընդունենք այդ հիվանդների մասին տրված աստվածաշնչյան բնորոշումներն առանց մեկնաբանության: Նույնն էլ կասենք Սուրբ հայրերի վարքաբանական եւ խրատական գրականության մասին, որ նրանց բնորոշումները մեզ համար ընդունելի են: Հարկ եմ համարում նշել, որ դիվահարությունը ոչ գիտական, սակայն իրական հիմքեր ունեցող վիճակ կամ հիվանդություն է, եւ չի կարելի այն շփոթել հոգեկան հիվանդության հետ: Հոգեբուժությունը հոգեկան հիվանդությունների պատճառագիտության հարցում դեռեւս վերջնական արդյունքի չի հասել: Այս կամ այն հիվանդության ծագման մասին կան հիմնավոր եզրակացություններ, սակայն դրանք էլ վերջնական չեն: Ուստի այսօր հոգեկան հիվանդության պատճառագիտությունը դեռ պարզ չէ: Սակայն բուժման հարցում ծանրակշիռ ձեռքբերումներ կան: Անհրաժեշտ է պարզապես դիմել հոգեբույժին՝ հոգեկան հիվանդությունից առողջանալու համար:

Օրհնությամբ՝Տ. Սմբատ քահանա Սարգսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եկեղեցում կա բժշկության կարգ, որը հոգեւորականն է կատարում: Հիվանդը կամ հիվանդի հարազատները բժիշկին դիմելուց առաջ կամ ընթացքում կարող են դիմել հոգեւորականին, որ նա աղոթի իրենց համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Այս փոքրիկի հաստատուն բռունցքը հիշեցնում է, որ մարդու մեջ միակ պայթող բանը գենի հիշողությունն է: Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցի ջահերով երթին մասնակցում էին բազմաթիվ երեխաներ. անցյալի ցավերն ու վրեժը փոխանցվում են սերնդեսերունդ, բայց հաղթանակի հավատով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 5 + 12+ 15
Կոտայքի լեռներ	+ 2 + 4 + 11+ 14
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 + 16 + 18
Գեղարքունիք	+ 2 + 4 + 11+ 14
Լոռի	- 3 + 2 + 15 + 18
Տավուշ	+ 1 + 5 + 18 + 22
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 + 14 + 18
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 4 + 15 + 18

Արարատ	+ 3 + 5 + 17+ 20
Արմավիր	+ 3 + 5 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 + 12+ 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 5 + 19 + 20
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 + 20+ 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 + 16 + 19
ԼՂՀ	+ 3 + 5 + 13 + 17
Երեւան	+ 4 + 6 + 17 + 20

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.4.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*